

ծունեում: Այնուհետև՝ դրամա տիկական ստեղծագործությունները, ինչպես նաև առանձին գրողների ժողովածուներում, այնպես էլ առանձին գրքերով լույս տեսած և սովետահայ մամուլում» (էջ 7), Բարձունկներում (էջ 32), Աշխարհն, այդ շուր է եկել (էջ 32), Եվ այլն կամ Նոր Դիոգենեսը (էջ 32), Նոր Բյուզանդիոս (էջ 21), Օրոքօցային (էջ 33), Նորունի Յ. (պետք է լինի Հ. էջ 55), Պիոներական վսկաս (էջ 79), Քնած դժգունին (էջ 90), Նա աասծ (էջ 91), Ժայրը (փոխանակ Մայր, էջ 92, 94), Հերված խոսք (էջ 101), Ետյուղ (էջ 103), Հ. Համբարցումյան (էջ 117), Իպոլիտ Պարկազարդ (էջ 117), Լուկուսի դատը (էջ 128, 130), Գ. Գրին (փոխանակ Գրիգ, էջ 131), Նորվեգիական (էջ 133), Ժ. Կոկտա (փոխանակ Կոկտո, էջ 138), Խանգառայան Ս. (էջ 143), Գևորգյան (էջ 141, 176) և այլն: Ցանկի բաժիններից մեկը վերնագրված է՝ «ՍՍՀՄ այլ ժողովուրդների դրամատիկական ստեղծագործություններ» (էջ 90), երբ ներկայացված են բոլոր՝ և՛ ռուս, և՛ մյուս ժողովուրդների գրողների ստեղծագործությունները և այլն:

Ռոտասպինտով հրատարակվող գրքերը շատ թերություններ ունեն, որոնք սուկա են նաև ներկա հրատարակության մեջ (տառատեսակի միօրինակությունը, որի պատճառով հստակ չեն զատվում բաժիններն ու ենթաբաժինները, որոշ էջերի աղոտ տպագրությունը և այլն): Բայց ռոտասպինտ գրքերը ունեն մի էական առավելություն՝ բնագրի անսխալ տպագրության հնարավորությունը, քանի որ չեն վերաշարվում, այլ նմանահանվում են մեքենագիր էջերից: Ուստի այս դեպքում տպագրական բոլոր անհարկի անակնկալները՝ վրիպակները, բացառվում են: Մեքենագիր էջերի վրա ավելի խնամքով աշխատելու դեպքում, անկասկած, այսպիսի թյուրիմացություններ չէին լինի:

Հակված ենք մտածելու, որ նշված թերությունները ոչ թե անփութության ու անբարեխղճության, այլ անհրաժեշտ հմտության պակասի արգասիք են: Բայց եթե սուկա է քարեխղճությունը, երաշխիք կա, ուրեմն, որ ձեռք կբերվի նաև հմտությունը, և կազմողի ապագայում տպագրվելիք ցանկերը զերծ կլինեն այս կարգի թերություններից:

Ա.ՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԶՎԱՐԹՆՈՑ.

ԿՈՐԹՈՂԻ ԾԱԿՍՏԱԳԻՐԸ



ԶՎԱՐԹՆՈՑԻ
ՎԵՐԱԿԱՆԳԵՄԱՆ
ՀԱՐՑԻ
ՇՈՒՐԶ

Զվարթնոցը հայ ճարտարապետության այն հուշարձանն է, որ իրավամբ վաստակել է ազգային ճարտարապետական կոթող կոչվելու իրավունքը և որով հետաքրքրվում են ամենքը՝ ինչպես մեր աշխատավորության լայն շրջանները, այնպես էլ աշխարհի այդ հուշարձանին ծանոթ գիտնականները: Բնականորեն հետաքրքրվողներին ամենից շատ հուզում է այն հարցը, թե հնարավոր է Զվարթնոցը վերականգնել և արդյոք վերականգնելու մտադրություն կա:

Զվարթնոցի վերաբերյալ հրատարակված շատ հետազոտություններ կան: Սակայն դրանք գերազանցապես վերաբերում են տաճարի վերակազմության հարցերին, այն խընդրին, թե ինչպիսի՞ն է եղել իրականում մինչև կործանվելը: Բայց այսօր պակաս կարևոր չէ նաև հուշարձանի վերականգնման նպատակահարմարության և հնարավորության խընդիրը: Ինքնին հասկանալի է, որ վերականգնման ու վերակազմության հարցերն անխզելիորեն շաղկապված են և զգալի չափով պայմանավորվում են միմյանցով:

Ինչպես հայտնի է, որևէ ճարտարապետական հուշարձանի վերականգնման համար հարկ է, որ սուկա լինեն մի շարք պայմանավորող հանգամանքներ: Օրինակ. անհրաժեշտ է, որ լիակատար հիմնավորված լինի սուկալ հուշարձանի վերականգնման նպատակահարմարությունը, նշանակությունը գեղարվեստական

Զվարթնոցի հյուսկեն խոսակ

տական, գիտական և պատմամշակութային առումներով: Եվ իհարկե, վերականգնման վերջնական որոշում կայացնելուց առաջ, որպես պարտադիր նախապայման, պետք է լինի վերակազմության հավաստի նախագիծ: Կարևոր է մի հարց ևս, թե առկա զանգվածներն ու բազմաթիվ-բազմապիսի բեկորներն արդյոք հնարավորություն ընձեռո՞ւմ են հուշարձանի վերականգնման համար:

Ոչ պակաս կարևոր է շինության վերականգնման բնույթի հարցը: Նախքան շինարարական աշխատանքների սկսվելը, ինքնին հասկանալի է, պետք է հայտնի լինի, թե ինչպե՞ս է այն վերականգնվելու՝ ամբողջապե՞ս, թե՞ մասնակի, նո՞ւյն տեղում, հի՞ն հիմքերի վրա, թե՞ նոր տեղում: Արդ, ի՞նչ վիճակում է Չվարթնոցը վերոհիշյալ առումներով և որքա՞նով է ռեալ նրա վերականգնումը: Այս հարցերի պատասխաններն էլ փորձում ենք տալ ստորև:

Տարիներ առաջ գտնվելով Հոռում, ես տեսա հուշակավոր Կոլիզեյը: Ինչպես հայտնի է, այն կիսակործան է, բայց նրա որոշ հատվածներ վերից վար կանգուն են և այդ կողմից նայելիս առանց դժվարության ամբողջական գաղափար ես կազմում երբեմնի հուշկապ շինության վերաբերյալ:

Նույնը կարելի է ասել Աթենքի Պարթենոնի մասին: Այն ևս որոշ հատվածներում է միայն վնասված: Փորձենք պատկերացնել, որ այս մեծ կոթողները պահպանված լինեին շարվածքի լույ ստորին մեկ-երկու շարքով, ինչպիսին է այժմ Չվարթնոցը. կարո՞ղ էին արդյոք դրանք այդպիսի գեղագիտական, էմոցիոնալ տպավորություն գործել դիտողի վրա: Իհարկե ոչ: Բայց չէ որ ինչպիսի արժեք և նշանակություն ունեն Կոլիզեյը Իտալիայի, Պարթենոնը Հունաստանի արվեստի և մշակույթի համար, ճույնպիսի արժեք ունի Չվարթնոցը հայ արվեստի ու մշակույթի համար:


Եթե Չվարթնոցը հիշյալ մեծ կոթողների վիճակում լինեք՝ մասամբ վնասված, կարելի էր շատ էլ չմտահոգվել վերականգնման համար, կարելի էր բավարարվել լույ կոնսերվացումով: Մինչդեռ այն ոչ թե վերոհիշյալների նման մասամբ է վրնասված, այլ լրիվ կործանված է՝ առկա է մեկ-երկու շարք, որմնախարսիսի մնացորդներ, որոնցով բնորշվում է շինության հատակագիծը միայն: Այդքանով իսկ այն չի ընկալվում իր ծավալատարածական հորինվածքով, դիտողի մտապատկերում չի վերստեղծվում այդ հուշակերտ կոթողի ամբողջական պատ-

կերը, ասել կուզի, այն չի ընկալվում իր գեղարվեստական-էմոցիոնալ ողջ ներգործունեությամբ:


Չվարթնոցը մեր ժողովրդի վաղ միջնադարի մեծագործություններից է: Հիշենք՝ դեռ 10-րդ դարի վերջերին հայ Բագրատունիներից արքայից արքա Գագիկ Առաջինը ըստ հարկի գնահատելով նրա արժեքը, իր տերության մայրաքաղաք Անիում կրկնեց Չվարթնոցը, որ հավերժի այդ կոթողի հիսաբանչ պատկերը: Ուրեմն ինչո՞ւ այսօր այդպիսի մի ձեռնարկման համար, ինքնին հասկանալի է, շատ ավելի նպատավոր պայմաններում մենք չձեռնարկենք նման մի պատվաբեր գործ: Կարծում ենք, Չվարթնոցի վերականգնման նպատակահարմարությունն անկասկած է, անվիճարկելի, անհրաժեշտության նման մի բան:

Արդ, այն մասին, թե պահպանված ավերակը որքանով է բավարարում հուշարձան վերականգնելու համար ներկայացվող պահանջները: Ինչպես սասցինք, այդ դեպքում նրա է ստնվում, թե կործանված հուշարձանից ի՞նչ է մնացել, հիմնական կառուցվածքների (տվյալ դեպքում՝ պատերի), շինանյութի ո՞ր մասն է կարելի օգտագործել վերականգնվող շինության առուցվածքում:


Ոմանք, վկայակոչելով այն հանգամանքը, որ, իբր, կարող են վերականգնվել միայն այն հուշարձաններից լավագույնները, որոնց առկա մնացորդները մեծ քանակ են կազմում, և այդ տրամաբանությամբ, քանի որ Չվարթնոցում առկա է փոքր մասը միայն, նպատակահարմար չեն համարում նրա վերականգնումը: Բայց, եթե մենք ըստ 10-րդ դարի պատմիչ Ասողիկի կրկին վկայակոչենք Գագիկ Առաջինի՝ Չվարթնոցի վերականգնման փորձը, ապա պետք է արձանագրենք, որ Գագիկ թագավորի պատվերը իրականացվեց ոչ թե Չվարթնոցի ավերակի քարերի և ձևավոր բեկորների օգտագործմամբ, այլ Անիում առկա քարերով ու նոր պատրաստված ձևավոր մասերով: Բացի այդ, հարցն ունի նաև խնդրի մի այլ կողմ: Բանն այն է, որ հարցին մասնագիտորեն մոտենալով, պետք է եզրակացնել, որ Չվարթնոցը վերականգնել կարելի է միայն ու միայն նոր մշակվելիք քարով և ոչ մի դեպքում՝ հին քարերի օգտագործմամբ: Նախ, որ հին քարերը հուշարձանի կործանումից ապազման վնասվել են, և ապա, որ առավել կարևոր է, հազարամյա ժամանակամիջոցում ենթակա լինելով հողմնահարման, այդ բեկորները կորցրել են սկզբնական որակը և երբեմնի ունեցած ամրությունը: Պետք է ընդունել, որ քարն էլ է




Տաճարի երրորդ աստիճանի (վերականգն. Տ. Մարությանի)



Վերանախկին հատակագիծը (վերականգն. Տ. Մարությանի)



Տաճարի հատակագիծը (վերականգն. Թ. Թորամանյանի)



«ծերանում», կորցնում իր կրողունակությունը: Գառնիի օրինակն այստեղ չի կարելի կրկնել, քանզի այլ է քառաստեսակը և այլ են շինության մասշտաբները:

Հուշարձանի վերականգնման նախապայմաններից մեկը, որ շատ կարևոր է, ինչպես նշեցինք, վերականգնության հավաստի նախագիծն է: Այս վերջինը, ինչպես հայտնի է, ստեղծվում է հիմնականում ավերակում պահպանված նյութերի, այդ թվում ձևավոր բեկորների ընձեռած հնարավորություննրի վրա:

Ունի՞ արդյոք Չվարթնոցը վերականգնության հավաստի նախագիծ: Հարց, որը բազմիցս արժարժվել է մեր մամուլում ինչպես դարակցրում, այնպես էլ մեր օրերում, սկսած հիսնական թվականներից:

Հայտնի է, որ Չվարթնոցի վերականգնության առաջին նախագիծը դեռևս 1904—1905 թթ. ստեղծել է Թորոս Թորամանյանը, և անկախ այդ նախագիծի բազմաթիվ վիճարկումներից, օժտված է բազմաթիվ արժանիքներով և առ այսօր պահպանում է իր նշանակությունը:


Լինելով մեծ գիտնական, Թորոս Թորամանյանը կարողացել է ճիշտ արժեքավորել իր այդ գործը, նշելով, որ ինքը մշակել է «...ընդհանուր կազմությունը հաստատուն փաստերի վրա հիմնված...», գիտական ազնիվ բարեխղճությամբ այն բոլորը, ինչը ենթադրաբար է արված, նա հանձնում է «...արվեստագետներուն լուրջ ուշադրությանը»:

Թորամանյանից հետո զվարթնոցագիտությունը զգալի առաջընթաց է ունեցել: Այն, ինչ մի քանի տասնամյակ առաջ «ենթադրական էր», այս կամ այն չափով պարզաբանվել և լուծում է ստացել:


Ինչպես բուն ավերակում, այնպես էլ այլուր Չվարթնոցին պատկանող այն բեկորները, որոնք չէին «մեկնաբանված», այժմ հասկացվել են, որոշվել է դրանց տեղը շինության առուցվածքում: Մասնավորապես, Արզնիում և Ջորաղբյուրում գտնվող ու անկասկած Չվարթնոցին պատկանող երկու խոշակներն իրենց չափերով ու այլ մանրամասներով հավաստի են դարձնում թորամանյանական վերակազմության կարևոր հանգույցներից մեկը ևս: Ասել կուզի, Չվարթնոցում պահպանված շինության հանգույցային դրվագները բնորոշող բեկորները մեծ հավանականությամբ և նույնիսկ զգալի մանրամասներով հնարավոր են դարձնում վերստեղծել տաճարի ամբողջական պատկերը ըստ Թորամանյանի վերականգնության: Իրոք, Թորամանյանի վերականգնության վիճարկումով



Հարթաքանդակ Փարիզի Սեն-Շապել (1243—1248 թթ.) տաճարից



Վանդակազարդ բեկորներ



հասնելու եկող հետազոտողները երկար տարիների ընթացքում այդպես էլ ի վիճակի չէին աներկայացնելու լուրջ, գիտականորեն հիմնավորված մի այլ վերականգնություն, որ լիներ առավել հավանական, օժտված նախորդին գերակշիռ բարենասնություններով: Քննության չորսմասան այն նորաստեղծ, ինքնահնար «օրհնաչափությունները», «կանոնները» ու «տեսությունները», որոնք կոչված էին, իբր, անստարկելիորեն ներկայացնելու նոր վերականգնությունների կարծեցյալ հավաստիությունը:

Այսպիսով, Չվարթնոցի վերականգնման համար որպես հավաստի հիմք, առանց երկրնորանքի, պիտի ճանաչվի թորոս թորամանյանի վերականգնությունը՝ անհրաժեշտ լրացումներով:

Կարևոր հարցերից է, ինչպես առաջինը, Չվարթնոցի վերականգնման բնույթի խնդիրը: Մեր կարծիքով լավագույնը, իհարկե, հուշարձանի ամբողջական վերականգնման տարբերակն է: Մյուս տարբերակները խնդրի մասնակի, հարկադրյալ լուծումներ են:

Նախկինում եղել են Չվարթնոցի նաև մասնակի վերականգնման առաջարկներ, որոնք, սակայն, քննություն չեն բռնել ո՛չ տեխնիկական, ո՛չ էլ գեղագիտական առումներով: Եղել է նաև տաճարը մանրամասնորեն վերականգնելու՝ առաջարկ: Թանգարանների համար մանրակերտի ստեղծումը այլ խնդիր է, մինչդեռ բնության մեջ որևէ մասշտաբով փոքրացրած տարբերակի տեղադրումը անթույլատրելի է. այն կարող է դիտվել որպես կոթողի բլնական և ճշմարտացի ընկալման աննախադեպ աղավաղում:

Լքագույն քննարկման ենթակա է վերականգնվող տաճարի տեղադրման հարցը: Սովորաբար հուշարձանները վերականգնվում են որևէ չափով պահպանվող ավերակի մնացորդների վրա այն դեպքում, երբ շինությունը վնասված է մասնակիորեն և անվնաս մնացած մասի օրգանիզմն առողջ է ու կարող է կրել նոր ավելացվող մասերը: Բայց երբ հուշարձանը կործանված է գրեթե հիմն ի վեր, ապա այդ դեպքում վերականգնվող շինությունը կարող է տեղադրվել նոր, առավել հարմար տեղում: Ահա այս վերջին պայմանն է ավելի նպատակահարմար կիրառել Չվարթնոցի դեպքում: Բանն այն է, որ հուշարձանի պահպանված հիմքերի վրա հնարավոր չէ բարձրացնել երբեմնի կանգուն տաճարի մեծության շինություն: Հարկ կլինի այդ հիմքերը քանդել և ճրանց տեղում ստեղծել նոր, առավել հուսալի հիմքեր: Սակայն հազարամյա հու-

շարձանի շինության մեջ այդպիսի հանցավոր միջամտությունը, ինքնին հասկանալի է, մերժելի է: Այդքանով իսկ Չվարթնոցի եղած շինության վրա վերականգնման տարբերակը անստարկելիորեն բացառվում է: Նույն պատճառներով մերժելի է նաև ամեն մի մասնակի վերականգնում բուն ավերակի վրա: Հետևում է, որ վերականգնվելիք Չվարթնոցի հուշարձանը կարող է տեղադրվել ազատ տեղում՝ գոյություն ունեցող հուշարձանի անմիջական հարևանությամբ և կամ նրանից որոշակի հեռավորության վրա:

Ավելի ընդունելի է, թերևս, այն տեղադրել հուշարձանի հարևանությամբ: Ծառ առումներով նախընտրելի է, որ այն տեղադրվի (ինչպես պատկերված է այստեղ բերված գրծագրում) գոյություն ունեցող ավերակից արևելք, մոտ երեսուն մետր հեռավորության վրա:

Մեզ հայտնի է, որ ոմանք՝ թե՛ արվեստագետներ, թե՛ ճարտարապետներ, դեմ են Չվարթնոցի վերականգնմանը, առավել ևս՝ հուշարձանի հարևանությամբ: Բայց հիշենք՝ այդ նույն ձևով կային մարդիկ, որոնք դեմ էին նաև Գատնիի վերականգնմանը: Այսօր վերականգնված Գատնիի հուշարձանն ինքնին լուծել է բոլոր տարակարծիք վեճերը հօգուտ ներկայիս վերականգնված հուշարձանի:

Վերականգնման նպատակահարմարությունը վիճարկող մասնագետ ճարտարապետները եզնում են նաև այն մտահոգությունից, թե գոյն վերականգնության նախագիծը, որի համաձայն պետք է վերականգնվի հուշարձանը, ինչ-որ չափով այնպիսին չէ, ինչպիսին եղել է երբեմնի կանգուն վիճակում: Նկատելի է սակայն, որ այս գոյության վերականգնումը հատկապես նրանց մոտ է գերիշխում, ովքեր համեմատաբար քիչ են խորամուխ եղել ամբողջական ավերակի և հատկապես նրա մանրամասների ուսումնասիրության մեջ:

Արդեն ճշեցինք, որ Չվարթնոցագիտությունը զգալի առաջընթաց է ապրել և որ վաղուց հայտնի ու նաև նորահայտ բեկորների ըստ ամենայնի ուսումնասիրությունը հնարավոր է դարձրել ճշտել Չվարթնոցի վերականգնությունն իր որոշակի մանրամասն, որով նույնիսկ: Այդ վերականգնությունը հիմնված է ստույգ տվյալների, գիտական ճիշտ եզրակացությունների վրա, սակայն դրանց ոչ բոլորն են ծանոթ, որը և առիթ է դարձել ավելորդ մտավախության:

Մենք շատ շատերի պես համոզված ենք, որ Թորոս Թորամանյանը կարողացել է վերստեղծել Չվարթնոցի վերականգնության հան-

ճարնդ տարբերակը: Ուրեմն ինչո՞ւ ենք կասեցնում այդ վերականգնության հիման վրա հուշարձանի վերականգնումը: Ըստ երևույթին, չափից ավելի կասկածատյան համար առիթ են դարձել վերականգնությունների այն փորձերը, որոնք զուրկ լինելով գիտական հիմքից, առայժմ գոյատևում են նրանց հեղինակների համատության և մյուսների պակաս իրազեկության պատճառով: Մեր պարբերական մամուլում ծամանակ առ ծամանակ հողվածներ են երևում Չվարթնոցի վերականգնության նախագծերի և տաճարի վերականգնման հարցերի վերաբերյալ: Ցավոք, հողվածագիրների մի մասը գրեթե ծանոթ չլինելով Չվարթնոցագիտության խնդիրներին, հուշարձանին ընդհանրապես ու մանրամասներին մասնավորապես, լայն ընթերցողներին հրամցում են սխալ ու ապակողմնորոշող տեղեկություններ: Տարիներ առաջ ինժեներ Լ. Ծահուվարյանն իր «Չվարթնոցի վերածնունդը» վերտառությամբ հողվածում առաջարկում էր վերականգնման այնպիսի տարբերակներ, որոնք քննություն չէին կարող բռնել ո՛չ գեղագիտական և ո՛չ էլ գիտական հիմնաքանակ: Եվ պատահական չէ, որ նրա այդ ելույթն անմիջականորեն անհավաստացրել էր Չվարթնոցի բախտով հետաքրքրվող ընթերցողներից շատ շատերին: Ի դեպ, այդ նույն հողվածում հեղինակը թույլ էր տվել նաև որոշ փաստերի անճշտություններ՝ տաճարի երեսունվեց մետրանոց տրամագծի մեկ երրորդը հաշվել էր ութ մետր, շինության բառաստուճհինգ մետր բարձրության մեկ երրորդը՝ ինը մետր և այլն:

Վերջերս նույն հարցով մամուլում ելույթ ունեցավ ճարտարապետ Հրայր Իսաբեկյանը («Չվարթնոցը ինչպես որ կա»): Հողվածն ընթերցելուց այն տպավորությունն է ստեղծվում, որ 1904—1905 թվականների Թ. Թորամանյանի ուսումնասիրություններից ու վերականգնումներից հետո այդ ուղղությամբ ոչինչ չի արվել և խորհուրդ է տրվում զբաղվել այդ գործով: Այս ևս եզրակացում է. «Եղած տվյալների հիման վրա հնարավոր չէր կազմել շենքի պատիչ նախագիծ»: Եվ որովհետև «պահպանված բարերի քանակը խիստ սահմանափակ է», հողվածագիրը գտնում է, որ հնարավոր չէ շինության ամբողջական վերականգնումը: Ըստ նրա, «Չվարթնոցի վերականգնման նպատակահարմար լուծումը նրա մասնակի վերականգնումն է»: Նա խորհուրդ է տալիս մասնակի վերականգնումը իրականացնել Թորամանյանի և այլ վերականգնու-

թյունների համադրմամբ, տեղյակ չլինելով, որ դրանք անհամատեղելի են և ընդհանրապես անթույլատրելի է Չվարթնոցի պահպանվող ավերակի վրա որևէ կառուցում իրականացնել թեկուզև մասնակի ձևով: Պարզենք՝ մասնակի վերականգնում ստելով հասկացվում է վերականգնել շինության առաջին աստիճանի (չարուսի) բազմանիստ թմբուկի մեկից երեք մետրը, որ մնախարսիսից մինչև թմբկապատը պակաս թիվը ներառյալ:


Մասնակի վերականգնում առաջարկողներից ոմանք չգիտեն, գիտցողներն էլ ըստ երևույթին մոռանում են, որ Չվարթնոցի առաջին աստիճանի թմբկապատի բարձրությունը հասնում է մոտ քսան մետրի, որ հավասար է բնակելի շենքի վեց և կես հարկի բարձրության, և որ այդ բարձրության մեկից երեք մետրով պատը չի կարող ինքնուրույն կանգնել: Որպես նեցուկ կպահանջվի վերականգնել տաճարի նաև ներքին կառուցվածքները: Այս կնշանակի առկա հուշարձանի մոտավորապես մեկ տասներորդ մասը հիմնահատակ քանդել, նոր հիմքեր ստեղծել, նոր պատեր ու թաղեր բարձրացնել, և այդ բոլորը նոր բարից: Հին բարերը առանց բացառության այնպիսի վնասվածքներով են, որ չի կարելի օգտագործել վերականգնվող պատերում: Գատնիի օրինակը, ինչպես նշեցինք, սովյալ դեպքում կիրառելի չէ:

Բացի այդ, մասնակի վերականգնման համար ծամանակակից քանդված հուշարձանի հարևանությամբ շինհրասպարակ ստեղծելը կնշանակի կորստյան մասնել ողջ հուշարձանը: Մեր համոզմամբ առկա ավերակի մնացորդների վրա նոր վերականգնումների (թեկուզ՝ մասնակի) իրականացնելը ո՛չ հնարավոր է և ո՛չ էլ թույլատրելի:

Չվարթնոցն այն հուշարձանն է, որ անկասկած ենթակա է ամբողջական վերականգնման, դրա նախադրյալները ռեալ են ու հեռանկալալին:

Մնում է ավելացնել, որ Չվարթնոցի՝ մեր ազգային ճարտարապետության այդ հիասքանչ կոթողի շահերը պահանջում են, որ նրան առնչվող ամեն փաստ, առավել ևս՝ ամեն մի ձեռնարկում լինեն կշռադատված, մասնագիտորեն ճշգրիտ, որպեսզի մենք կրկին չկանգնենք արդեն նորոյա կորուստների փաստի սուջն:

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ
Հայկական ՍՍՀ վաստակավոր ճարտարապետ, ճարտարապետության թեկնածու



Լուսանկարը՝ Մամվեկ Սեդեճյանի